

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 8/10

վեցը հուլիսի 2017 թվականի

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԻԶԻԱԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԱՄԲԻՈՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 49-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարանի ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոնի կանոնադրությունը»՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի 2007թ. մայիսի 30-ի նիստի որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարանի ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոնի կանոնադրությունը»:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2017թ. հուլիսի 6-ի թիվ 8 նիստում

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ,
Ա. Հ. Սիմոնյան
«6» հուլիսի 2017թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ԱՄԲԻՈՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևանի պետական համալսարանի ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոնը (այսուհետ՝ ամբիոն) Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Ամբիոնը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ ԵՊՀ-ի և սույն կանոնադրության հիման վրա:

3. Ամբիոնը սահմանված կարգով կարող է ունենալ դրոշմակնիք՝ (հայերեն, ռուսերեն, անգլերեն [եզուներով), պաշտոնաթուղթ (բլանկ) և անհատականացման այլ միջոցներ:

II. ԱՄԲԻՈՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Ամբիոնի խնդիրներն են.

4.1. կազմակերպել և անցկացնել «Ֆիզիկական դաստիարակություն» առարկայի ուսումնական ծրագրին համապատասխան ուսումնական գործընթաց,

4.2. կազմակերպել սպորտ-մասսայական միջոցառումներ,

4.3. ԵՊՀ հավաքական թիմերին նախապատրաստել հանրապետական ուսանողական մարզական միջոցառումներին,

4.4. կազմակերպել ուսանողների և աշխատողների առողջության ամրապնդմանն ուղղված սպորտային միջոցառումներ, նպաստել սպորտի մասսայականացմանը,

4.5. իրականացնել ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքներ,

4.6. լուծել ԵՊՀ կանոնադրությունից և ամբիոնի հիմնական գործունեությունից բխող այլ խնդիրներ:

III. ԱՄԲԻՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5. Ամբիոնի աշխատանքների համակարգումն իրականացնում է ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը:

6. Ամբիոնի աշխատանքների ղեկավարումն իրականացնում է ամբիոնի վարիչը, ով մրցութային հիմունքներով ընտրվում է ԵՊՀ գիտական խորհրդում փակ, գաղտնի քվեարկությամբ՝ 5 տարի ժամկետով:

Ամբիոնի վարիչի ընտրության կարգն ու պայմանները սահմանվում են ԵՊՀ ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգով:

7. Ամբիոնի վարիչը՝

7.1. կազմակերպում և վերահսկում է ամբիոնի ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքները, ապահովում է ամբիոնի հիմնական գործառույթների իրականացումը և լուծում դրանից բխող հիմնախնդիրները,

7.2. ղեկավարում է ամբիոնի ուսումնաստանդակ համակազմի աշխատանքները,

7.3. ամբիոնը ներկայացնում է ԵՊՀ-ի, համալսարանական ստորաբաժանումների, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ հարաբերություններում,

7.4. ամենամյա հաշվետվություն է ներկայացնում ԵՊՀ գիտական խորհրդին,

7.5. հսկողություն է իրականացնում ամբիոնի սպորտային ունեցվածքի, գույքի, առկա սպորտային կառույցների ու տարածքների շահագործման և պահպանման նկատմամբ,

7.6. սահմանված կարգով տնօրինում է ամբիոնին հատկացված ֆինանսական միջոցները,

7.7. կազմակերպում է մասսայական սպորտային միջոցառումներ և ուսանող-մարզիկների սպորտային վարպետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ,

7.8. պատասխանատվություն է կրում ամբիոնի առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ լուծման համար,

7.9. լուծում է սույն կանոնադրությունից բխող և ամբիոնի գործունեության հետ կապված այլ հարցեր:

8. Ամբիոնի գիտակրթական գործունեության հետ կապված հարցերը քննարկվում են ամբիոնի նիստերում, որին մասնակցում են ամբիոնի գիտամանկավարժական համակազմի ներկայացուցիչները: Ամբիոնի այլ աշխատողներն այս նիստերին մասնակցում են խորհրդակցական ծայնի իրավունքով:

9. Ամբիոնի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության: Ամբիոնի նիստերի արձանագրությունները ստորագրվում են ամբիոնի վարիչի և գործավարի կողմից:

10. Ամբիոնը սահմանված չափանիշների համաձայն կազմում է հաստիքացուցակի նախագիծը և այն ներկայացնում է ԵՊՀ ռեկտորին:

11. Ամբիոնի գիտամանկավարժական կազմում ընդգրկված են պրոֆեսորները, դոցենտները, ասիստենտները, դասախոսները: Գիտամանկավարժական կազմի բոլոր թափուր պաշտոններում տեղակալումն իրականացվում է ըստ աշխատանքային պայմանագրի, որը կնքվում է մինչև 5 տարի ժամկետով: Աշխատանքային պայմանագրի կնքմանը նախորդում է բաց մրցութային ընտրությունը, որն իրականացվում է «ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնների տեղակալման ընթացակարգի» համաձայն:

IV. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12. Ամբիոնի վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է ԵՊՀ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

13. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ-ի գիտական խորհրդի կողմից՝ ԵՊՀ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով: